

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲԲԱ-ԱՄ-2019/33, 13.03.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Դավթյան» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Արգելելու «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի պատվիրատուին կատարելու 28.02.2019թ. թիվ 2.1 արձանագրությունից բխող գնումների մասին օրենսդրությամբ սահմանված հետագա գործողությունները, այդ թվում՝ Ա/Ձ Ցոլակ Վարդգեսի Գևորգյանի հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելը:

2. Պարտավորեցնելու «ՀՀ ԱԳԿԿ-ԷԱԾՁԲ-19/05» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի պատվիրատուին ընդունելու որոշում՝ «Դավթյան» ՍՊԸ-ին որպես առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին և կնքելու «Դավթյան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել <https://www.e-gov.am/gnumner/> հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության
Քննմանի ետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Աղանյան փող. 1

ՀՀ ԱԳԿԿ-ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային
աճուրդի ձևով գնման ընթացակարգի
Մասնակից «Դավթյան» ՍՊԸ-ից
տնօրեն Ա. Դավթյան
էլեկտրոնային փոստ՝ info@toolbox.am
davtyanadam@gmail.com
հեռախոս՝ + 374 44 700 180
+ 374 41 700 180

ՀՀ ԱԳԿԿ-ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային
աճուրդի ձևով գնման ընթացակարգի
Պանվիրատոմ՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կամիսե
Հասցե՝ ք. Երևան Արշակունյաց 7
էլեկտրոնային փոստ՝ gnumner@cadasttre.am


Բողոք

Հիմք ընդունելով «Քննմանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը ներկայացնում եմ
սույն բողոք ՀՀ ԱԳԿԿ-ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման
ընթացակարգի հանձնաժողովի՝ «Դավթյան» ՍՊԸ-ին որպես առաջին տեղը զբաղեցրած
մասնակցի հայտը մերժելու և առաջին տեղը զբաղեցնող մասնակից ԱՉ Յուսի Վարդգեսի
Ֆնորքյանին ճանաչելու գործողությունների վերաբերյալ:

1. Նախապատմությունը.

1.1. «Դավթյան» ՍՊԸ-ն /այսուհետև՝ նաև՝ Ընկերություն/, մասնակցելով թիվ ՀՀ ԱԳԿԿ-
ԷԱՄՁԲ 19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին, 12/02/2019թ. ին՝ E AUCTION
համակարգից /այսուհետև՝ նաև՝ Համակարգ/ էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է ՀՀ
ԱԳԿԿ-ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի
հանձնաժողովի /այսուհետև՝ նաև՝ Հանձնաժողով/ 11/02/2019թ. թիվ 2 արձանագրությունը,
որի համաձայն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից և «Որակավորման
փաստաթղթեր ուղարկելու մասին» ծանուցում:

1.2. Ընկերության կողմից փորձ է արվել Համակարգի միջոցով ներկայացնելու
որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթղթեր,
սակայն դա կատարել չի հաջողվել: Աշխատելով փաստաթղթերը ներկայացնելու
անհնարինությունը պարզելու նպատակով, միևնույն ժամանակ ենթադրելով, որ
հնարավոր պատճառ կարող է հանդիսանալ որակավորման չափանիշներին
համապատասխանության վերաբերյալ փաստաթղթերի ծավալուն լինելը, մեր կողմից
15/02/2019թ. ին՝ կամայական՝ փոքրածավալ, մի փաստաթուղթ է վերբեռնվել Համակարգ:
Համակարգը նշված փաստաթուղթը ընդունել է, սակայն փոփոխելու հնարավորություն չի
ավել:



1.3. Գիտակցելով, որ համակարգի անաշխատության պատճառով մեր կողմից սխալ են ներկայացվել պահանջվող որակավորման համապատասխանության վերաբերյալ փաստաթղթերը գանգահարել ենք 22 ԱԳԿԿ-ԷԱՇՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող Հանձնաժողովի քարտուղար Լ. Օրդուխանյանին /060474142 հեռախոսահամարով/ և հայտնել կատարվածի մասին: Վերջինս մեզ հայտնել է, որ անհանգստանալու և այլ գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա, քանի որ Ընկերությունը ունի նշված իրավիճակը շտկելու հնարավորություն:

19/02/2019թ. -ին Համակարգի միջոցով Ընկերությունը ստացել է «Շտկման պահանջի» վերաբերյալ ծանուցում թիվ 22 ԱԳԿԿ ԷԱՇՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 8.16 կետի «2» ենթակետով սահմանված պարտադիր պայմանի խախտումով այն է՝ ծանուցումը կցված չի եղել հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

1.4. 19/02/2019թ.-ին մեր կողմից Համակարգ է վերբեռնվել էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը:

1.5. Որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը համակարգի միջոցով ներկայացնելուց հետո արձագանք չստանալով՝ 22/02/2019թ.-ին գանգահարել ենք գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Օրդուխանյանին, ներկայացրել խնդիրը: Օրդուխանյանը պատասխանել է, որ իրենք անհայտ պատճառով չեն կարողանում տեսնել այդ փաստաթղթերը և խնդրել է դրանք ներկայացնել էլեկտրոնային փոստով: Հաշտի առնելով ստեղծված արտասոց և անկանխատեսելի իրավիճակը Օրդուխանյանից խնդրել ենք այդ ամենի վերաբերյալ մեզ հայտնել պաշտոնապես էլեկտրոնային փոստով նամակ ուղարկելու միջոցով, հետագայում տարաձայնություններից խուսափելու նպատակով:

1.6. Օրդուխանյանից ակնկալվող նամակը չստանալով Ընկերության անօրենի էլեկտրոնային փոստից 26/02/2019թ.-ին Օրդուխանյանի տիրապետության տակ գտնվող էլեկտրոնային փոստի gnumner@cadastre.am հասցեին երկրորդ անգամ է ներկայացվել որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը:

1.7. 01/03/2019թ.-ին gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստից Ընկերության անօրենի Ադամ Դավթյանի անձնական էլեկտրոնային հասցեով ստացվել է 28/02/2019թ.-ի թիվ 22 ԱԳԿԿ-ԷԱՇՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի 28.02/2019թ.-ի թիվ 2.1 արձանագրությունը, որի համաձայն Հանձնաժողովը որոշում է կայացրել մերժելու «Նավթյան» ՄՂԸ-ի որպես սուղին տեղը գրադեցյալ մասնակցի հատը և սուղին տեղը գրադեցնող մասնակցից է ճանաչել Ա/Ձ Ցոլակ Վարդգեսի Գևորգյանին: Արձանագրությունից պարզվել է նաև, որ

Գտնում են, որ Հանձնաժողով կողմից թիվ 2.1 արձանագրությունը ընդունված որոշում կայացրել է ապօրինի որոշում հետևյալ պատճառաբանությամբ.

2. Առարկության հիմնավորող փաստարկները և իրավական հիմքերը.

2.1. Ինչպես նշվեց վերոգրյալում որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելիս Համակարգում առկա են եղել և առ այսօր կան տեխնիկական անաբբություններ, որոնք խոչընդոտել և գործնականում անհնարին են դարձրել Ընկերության կողմից իր պարտականությունների

պատշաճ կարգով կատարումը: Նշվեց նաև, որ Համակարգի տեխնիկական անսարքությունների պատճառը պարզելու ընթացքում Ընկերությունը որպես որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթուղթ սխալմամբ Համակարգ է այլ գնման գործընթացի հետ առնչություն չունեցող փաստաթուղթ:

Այն հանգամանքը, որ Համակարգում առկա են եղել անսարքություններ և խտիանումներ հայտնի է եղել նաև Հանձնաժողովին, և այդ մասին նշվել է 28/02/2019թ. թիվ 21 արձանագրությունում:

2015թ. հունիսի 5-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Պետական գնումների մասին համաձայնագիր» միջազգային պայմանագրի /այսուհետ նաև Համաձայնագիր/ 4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «Նշված գնումներն էլեկտրոնային եղանակով իրականացնելիս պատվիրատուն պետք է,

ա. ապահովի, որպեսզի գնումներն իրականացվեն օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կոդավորման առումով, որոնք ընդհանուր առմամբ, հասանելի են և փոխգործակցող այլ ընդհանուր առմամբ հասանելի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ, և բ. պահպանի մեխանիզմներ, որոնք ապահովում են մասնակցության և մրցույթների հայտերի ամբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կանխարգելումը»:

«Գնումների մասին» 22 օրենքի /այսուհետ նաև Օրենք/ 2-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված է, որ «էլեկտրոնային աճուրդ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ կոր նվազեցված գների ներկայացման գործընթաց, որը հնարավորություն է տալիս ախտաբան գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը», իսկ «էլեկտրոնային միջոցներ» մարտիային, օսպիս, օպտիկական միջոցներով կամ էլեկտրամագնիսական այլ միջոցներով փոխանցված, տեղավորված և ստացված տվյալների սշակման ու պահպանման, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգերի կազմակերպման համար անհրաժեշտ էլեկտրոնային, այդ թվում՝ ծրագրային և ապարատային միջոցներ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի համալիր վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ էլեկտրոնային աճուրդը գնում կատարելու էլեկտրոնային եղանակ է, որն իրականացնելիս պատվիրատուն պետք է ապահովի, որպեսզի գնումներն իրականացվեն օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կոդավորման առումով, որոնք ընդհանուր առմամբ, հասանելի են և փոխգործակցող այլ ընդհանուր առմամբ հասանելի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ: Մինևույն ժամանակ Պատվիրատուն պետք է պահպանի մեխանիզմներ, որոնք ապահովում են մասնակցության և մրցույթների հայտերի ամբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կանխարգելումը:

Այսպիսով վերոգրյալից ելնելով գտնում են, որ որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթղթերը Ընկերության կողմից պատշաճ կարգով չներկայացնելը պայմանավորված է եղել սույն գնման գործընթացի Պատվիրատուի 22 անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու սյն է՝ չի ապահովել, որպեսզի գնումներն իրականացվեն օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կոդավորման առումով, որոնք ընդհանուր առմամբ, հասանելի են և

փոխգործակցող այլ ընդհանուր առմամբ հասանելի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ, ինչպես նաև մասնակցության և մրցույթների հայտերի ամբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կանխարգելումը պահպանող մեխանիզմներ չապահովելը:

2.2. Սույն առարկության նախապատմությունը նկարագրելիս մեր կողմից հիշատակվել են անհերքելի փաստեր այն մասին, որ

Ա. Համակարգի անսարքության պատճառով մեր կողմից որպես որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ փաստաթուղթ մեկ այլ անվերաբերելի փաստաթուղթ սխալմամբ ներկայացնելու վերաբերյալ անհապաղ տեղեկացվել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Օրդուխանյանին և վերջինս, չկարևորելով այդ հանգամանքը, հայտնել է, որ Հնկերությունը հնարավորություն ունի շակելու առաջացած թուրիմացությունը:

Բ. 19/02/2019թ. ին Համակարգի միջոցով Հնկերությունը ստացել է «Շտկման պահանջի» վերաբերյալ ծանուցում հրավերով նախատեսված 8.16 կետի «2» ենթակետով սահմանված պարտադիր պայմանի խախտումով.

Գ. 19/02/2019թ.-ին մեր կողմից Համակարգ է վերեօնվել որակավորման չափանիշներին Հնկերության համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը, սակայն դրանք Հանձնաժողովի կողմից չեն ուսումնասիրվել, փոխարենը Հանձնաժողովի քարտուղար Օրդուխանյանը խնդրել է երրորդ անգամ ներկայացնել որակավորման չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը այն էլ էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պայմաններից տարբերվող պայմաններով՝ էլեկտրոնային փուստի միջոցով:

Դ. Հանձնաժողովը իր 28/02/2019թ. թիվ 2.1 արձանագրությամբ կայացրել է որոշում մերժելու Հնկերության հայտը, մերժման հիմքում դնելով հետևյալ հանգամանքը. «Շտկման ժամանակ մասնակիցը չի ապահովել սույն հրավերի 1 ին մասի 2-րդ բաժնի 2.1 կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահանջը, մասնավորապես բացակայում են պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար ավելի պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնան-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պարմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Նշված նորմերի վերլուծությունից իր եկրթի հանգում ենք նրան, որ գնման գործընթացի հիմնարար սկզբունքներն են գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսումը, գնման գործընթացին մասնակցող անձանց գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը:

Այսպիսով գտնում են, որ սույն գնման գործընթացը կազմակերպված չի եղել կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական

հիմունքներով, մասնակիցների միջև մրցակցության խրախուսմամբ, քանի որ բացառապես Ընկերությունն է անկախ իր կամքից, գործողություններից միևնույն ժամանակ Պատվիրատուի գործողությունների և անգործության արդյունքում գրկվել պատշաճ կերպով շտկում ներկայացնելու իր իրավունքից, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի գործողություններից մասնավորապես Պատվիրատուն էլեկտրոնային գնման քննարկարկուք էլեկտրոնային աճուրդ, կազմակերպելովի չի կատարել 2015թ. հունիսի 5 ին Հայաստանի Հանրապետության կողմից փոփոխված «Պետական գնումների մասին համաձայնագիր» 4-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտականությունները, այն է էլեկտրոնային համակարգի անխափան աշխատանքի ապահովումը, իր հերթին հանձնաժողովը, բացատրելի լինելով Ընկերության կողմից որակավորման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու պահին Համակարգում առկա անսարքություններ մասին, հաշվի չի առել, որ դրանով անհնարին է դարձել թե՛ մասնակցի Ընկերության և թե՛ իր Հանձնաժողովի, համար հրավերով սահմանված կանոնների պատշաճ կատարումը, որի հետևանքով գնման գործընթացի մասնակիցների շրջանակներում բացառապես մեր Ընկերությունն է գրկվել որակավորման վերաբերյալ փաստաթղթերը սխալ ներկայացնելու պարտազայում իրավական նորմով իրեն տրված պատշաճ կարգով շտկում ներկայացնելու բացառիկ ենարավորությունից: Ընդ որում շտկումը պատշաճ կարգով ներկայացնելու իրավունքից Ընկերությանը արհեստականորեն զրկելու իր մեղքի բաժինն ունի հանձնաժողովի քարտուղար Օրդուխանյանը, ով սխալ ուղղորդելով, իր կարևոր պարտականությունը չկատարելով և անգործությամբ մասնավորապես շտկման վերաբերյալ ծանուցմանը չլցնելով ոսկսածաժողովի համապատասխան արձանագրությունը, որում մանրամասն պետք է նկարագրված լինեին գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով, կլնելով վերոգրյալից գտնում եմ, որ Հանձնաժողովի 2.1 արձանագրությամբ կայացրած որոշումը չի բխում գնումների գործընթացի կազմակերպման հիմնարար սկզբունքներից, այդ որոշումը ընդունվել է անհամաչափ պոզիանների կիրառմամբ, խտրական մոտեցում դրսևորելով և այլ խախտումներով:

2.3. Ինչպես նշվեց Հանձնաժողովը իր 28/02/2019թ. թիվ 2.1 արձանագրությամբ կայացրած Ընկերության հայտը մերժելու իր որոշման հիմքում է դրել հետևյալ հանգամանքը. «Շտկման ժամանակ մասնակիցը չի ապահովել սույն հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնի 2.1 կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահանջը, մասնավորապես բացախողում են պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատում՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի ժամանակ ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունված կողմի գրավոր հավաստումը»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր աշխվների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է, և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բալարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բալարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով Ընկերությունը ներկայացրել է գնումների օրենսդրությանը և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան հայտ, որը գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվել է, և հաշվի առնելով հայտերի գնահատման սկզբունքը՝ Ընկերության կողմից նվազագույն գնային առաջարկ ներկայացված լինելու հանգամանքը, գնահատող հանձնաժողովի 11/02/2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Մինչև ժամանակ պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն ստորև բեր պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել է Ընկերության որակավորման փուլը ցուցանիշները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունենալը, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չափի համապատասխանությունը և նախատեսված չի հարմարեցրել:

Այսպիսով հանձնաժողովին մնացել է ստուգելու Ընկերության «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը, որի վերաբերյալ Ընկերությունը, մասամբ հաղթահարելով իր առջև ծառայած Համակարգի անսարքությամբ պայմանավորված խոչընդոտները, հանձնաժողովի գնահատմանն է ներկայացրել իր կողմից նախկինում կատարված համեմատան աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր:

Նույնիսկ, եթե պայմանականորեն ընդունենք, որ Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորելու համար նախատեսված փաստաթղթերը բավարար չեն եղել, ապա նշվածը պայմանավորված է եղել զուտ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը չներկայացնելով:

Հիշատակված իրավական նորմերի և առկա փաստերի համալիր վերլուծությամբ, ես գտնում եմ որ Հնկերության հայտը մերժելը տեղի է ունեցել գնումների մասին օրենսդրության հիմնական նպատակների և սկզբունքների խախտմամբ, քանի որ գնահատող Հանձնաժողովի գործողությունները չեն կարող ապահովել արդարացի հավասարակշռություն Հնկերության կողմից գնումների մասին օրենսդրության հիմնական նպատակի, սկզբունքների, ի թիվս այլոց գնումների և գնումների գործընթացի տնտեսող-արդյունավետ և օգտավետ իրականացնելու սկզբունքի, ինչպես նաև որակավորման չափանիշները հաստատելու վերաբերյալ Հնկերության կողմից մի շարք փաստաթղթեր ներկայացնելու փաստի և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ հաստատելու նպատակով հրավերով նախատեսված փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացնելու դեռևս վիճելի հանգամանքի միջև: Ընդ որում հասկանալի է, որ Հնկերության կողմից ներկայացվել են համանման աշխատանքների կատարման մասին գործարքների հիմնական փաստաթղթեր՝ պայմանագրեր և հաշիվ սպրանքագրեր, և չեն ներկայացվել ընդամենը պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Այսպիսով գնահատման հանձնաժողովը պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը առավել է դասել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված բոլոր կիրառելի նորմերի կատարման, այդ թվում նվազագույն գնային առաջարկի կարևորագույն սկզբունքից և, ըստ էության գնահատելով է, որ ակտի պատճենի կամ գրավոր հավաստման վերաբերյալ փաստաթղթի առկայությունը առավել է, քան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից 500000 ՀՀ դրամ սղել ծախսելը:

Շարժ եմ համարում նշել, որ Հնկերությունն ունի թե՛ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենների թե՛ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը հաստատող փաստաթղթեր և հնարավորություն ունենալու դեպքում կարող էր ներկայացնել:

3. Համաձայն 22 Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործունեություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական քարկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ Մարդն ազատ է անելու այն սակեր, ինչը չի խախտում այլոց կրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ որ չի կարող կրել պարստականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Համաձայն Սահմանադրության 59-րդ հոդվածի.

1. Յարաքանչյուր ուր ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թուլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաչափումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Գումար էմ. որ 28/02/2019թ. թիվ 2.1 արձանագրությամբ կայացրած Շնկերության հայտը մերժելու իր որոշում ընդունվել է ի թիվս վերջ խախտումների, նաև պաշտոնատար անձանց իրավասությունների սահմանազանցման, ՀՀ տնտեսական կարգի, այդ թվում՝ գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության և ընդհանուր տնտեսական բարեկեցության, հակամրցակցային համաձայնությունների արգելքի սկզբունքների խախտմամբ, ուստի էլ նկատվեց և ղեկավարվելով «Գեումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով

խնդրում եմ.

1. քննության ընդունել սույն բողոքը. *

2. արգելելու ՀՀ ԱԳԿԿ-ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի պատվիրատուին կատարելու 28/02/2019թ. -ի թիվ 2.1 արձանագրությունից բխող ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված հետագա գործողությունները այդ թվում ԱՄՁ Ցույակ Գարդզեսի Գնորգային հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելը,

3. պարտավորեցնելու ՀՀ ԱԳԿԿ-ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի պատվիրատուին ընդունելու որոշում «Դավթյան» ՍՊԸ-ի որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին, և կնքելու «Դավթյան» ՍՊԸ-ի հետ պայմանագիր. Գից ներկայացնում եմ՝

1 ՀՀ ԱԳԿԿ ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի 11/02/2019թ. թիվ 2 արձանագրության յուսապատճենը.

2. ՀՀ ԱԳԿԿ-ԷԱՄՁԲ-19/05 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի գնահատման հանձնաժողովի 28/02/2019թ. թիվ 2.1 արձանագրության յուսապատճենը.

3. Ապացույց 15/02/2019թ.-ին որակավորման մասին փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ.

4. 19/02/2019թ.-ին «Շուկան պահանջի» վերաբերյալ ծանուցումը առանց հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենի ներկայացնելու մասին ապացույց.

5. Ապացույց 26/02/2019թ.-ին որակավորման չափանիշներին Շնկերության համապատասխանությունը կատարող փաստաթղթերը ներկայացնելու մասին

6. Ներկայացնում որակավորման փաստաթղթերը.

7. Լրացուցիչ փաստաթղթեր որակավորման չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ.

8. Բողոքը ներկայացնելու համար վճարումը հավասարապես փաստաթուղթ:

Այսօր 97 րենքստանոթ/ թերթ:

«Դավթյան» ՍՊԸ տնօրեն Ա. Դավթյան՝

